



ԱՐՄԱՅՆՈՐԴ ՍՐԲԱՋԱՆ ՀԱՅՐԸ ԱՅՑԵԼԵՑ ՏԻԹՐՈՅԹԻ ԵՒ ՄՈՆԹԻԷԱԼԻ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

Հրատարակութեան խնդրանքով

Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՋԱՆ ՀԱՅՐԸ ԱՅՑԵԼԵՑ ՏԻԹՐՈՅԹԻ ԵՒ ՄՈՆԹԻԷԱԼԻ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ

Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան Շաբաթ Յունուար 12ին մեկնեցաւ Տիթրոյթ: Նոյն օրը երեկոյեան Սառլոթսիլի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ ճաշկերոյթ մը՝ որուն ներկայ եղան հոծ թիւով ծխականներ:

Յաջորդ օրը, Կիրակի Յունուար 13, Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ մէջ նորին Արքայապետ Ս. Պատարագ մատոյց եւ քարոզեց: Յաւարտ Ս. Պատարագի՝ ընդունելութիւն մը տրուեցաւ եկեղեցւոյ սրահին մէջ: Նոյն երեկոյեան Առաջնորդ Արքայապետ Հայրը մասնակցեցաւ կազմակերպուած ընթրիքին՝ որուն ներկայ էին ծխական Խորհուրդի անդամները եւ եկեղեցւոյ կազմակերպութեանց ներկայացուցիչները: Այս առթիւ կազմակերպութեանց անունով քաժակամատեր արտասանուեցան Հոգեւոր Հովիւ Հոգշ. Տ. Փառէն Ծ. Վրդ. Աւետիքեանի, Բ. Բարզէն Արք. Անուշեանի եւ այլ անդամներու կողմէ: Իսկ եկեղեցւոյ մոմակալներուն անունով քաժակ առաջարկեց ազգային մեծանուն բարերար Տիար Ալեք Մանուկեան՝ ինքզինք ներկայացնելով որպէս ամենէն տարեց մոմակալը: Տէր եւ Տիկին Մանուկեան ներկայ էին նաեւ Շաբաթ գիշերուան ճաշկերոյթին, ուր Տիար Մանուկեան իր սրտագին խօսքը յայտնեց Առաջնորդ Արքայապետին:

Յունուար 14 Երկուշաբթի առաւօտ նորին Արքայապետ Ս. Պատարագ Հ.Բ.Ը.Մ. Ալեք Մանուկեան ամէնօրեայ վարժարանը, ուր դիմաւորուեցաւ վարժարանի տնօրէնուհին, ուսուցչական կազմին եւ աշակերտներուն կողմէ: Վարժարանի բարձրագոյն կարգի աշակերտները Արքայապետ Հայրը առաջնորդեցին դասարանները, ներկայացուցին ուսուցիչները եւ տուին անհրաժեշտ տեղեկութիւններ:

Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան կէսօրուան ճաշի հիւրը եղաւ Տիար Ալեք Մանուկեանի եւ անոր որդւոյն Ռիչըրտ Մանուկեանի: Ժաշին ներկայ

էին նաեւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Հոգշ. Տ. Փառէն Ժ. Վրդ. Աւետիքեան եւ Տիար Երուանդ Ազատեան:

Երեկոյեան՝ նորին Սրբազնութիւնը, ընկերակցութեամբ Հոգեւոր Հովիւին, ներկայ գտնուեցաւ եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցող Ս. Գրքի ուսումնասիրութեան դասընթացքին՝ առաջնորդութեամբ Տիար Մարթին Չոլագեանի: Նաեւ առաջին անգամն ըլլալով ութը երիտասարդներ եւ երեք երգեհոնահարներ կը մասնակցէին սարկաւազի բաժնի ուսուցման դասընթացքին՝ զոր կը վարէր եկեղեցւոյ դպրապետ Արա Սրկ. Հայկ: Այս առթիւ Սրբազան Հայրը տուաւ կարգ մը օգտակար ծանօթութիւններ սարկաւազի բաժնի մասին:

Ապա Առաջնորդ Սրբազան Հայրը մասնակցեցաւ Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան ժողովին:

Յունուար 15 Երեքշաբթի կէսօր Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան Տիթրոյթէն մեկնեցաւ Մոնթրէալ: Ժամբու ընթացքին օդանաւը վայրէջք կատարեց Թորոնթօ, ուր Առաջնորդ Սրբազան Հօր միացաւ Գանատայի Առաջնորդի Փոխանորդ Հոգշ. Տ. Վազգէն Ժ. Վրդ. Քէշիշեան:

Մոնթրէալի օդակայանին մէջ Առաջնորդ Սրբազան Հայրը եւ Առաջնորդի Փոխանորդ Հայր Սուրբը դիմաւորուեցան Հոգեւոր Հովիւ Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեանի, ծխական Խորհուրդի անդամներու, թեմական պատգամաւորներու եւ կարգ մը ծխականներու կողմէ:

Նորին Սրբազնութիւնը նախ առաջնորդութեան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին, եւ ապա պանդոկ, ուր երեկոյեան ժամը 6.30ին ծխական Խորհուրդի անդամներուն հետ ընթրիք եւ խորհրդակցութիւն ունենալէ ետք, ժամը 9.00էն 12.00՝ եկեղեցւոյ սրահին մէջ ժողով ունեցաւ ծխական Խորհուրդի անդամներուն եւ թեմական պատգամաւորներուն հետ:

Յաջորդ առաւօտ ժամը 10.00ին՝ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, ընկերակցութեամբ Տ. Վազգէն Ժ. Վրդ. Քէշիշեանի, Տ. Պարէտ Վրդ. Երէցեանի եւ կարգ մը ազգայիններու, այցելեց Մոնթրէալի Արմէն Քէպէք Հ.Բ.Բ.Մ. Ալեք Մանուկեան ամէնօրեայ վարժարանը, ուր ի պատիւ նորին Սրբազնութեան եղաւ խնդավառ ընդունելութիւն մը:

Առաջնորդ Սրբազան Հայրը, որ նախագահած էր վարժարանի հողի օրհնութեան արարողութեան, իր առաջին պաշտօնական այցելութիւնը կու տար այս գեղակերտ վարժարանին:

Ալեք Մանուկեան վարժարանի Արշալիր եւ նաոխ Կէօնժեան շքեղ սրահին մէջ տեղի ունեցաւ հաւաքոյթ մը, որուն ընթացքին բարի զալստեան խօսքեր արտասանուեցան վարժարանի ընդհանուր տնօրէն Տոքթ. Արշալիր Կէօնժեանի, տեսուչ Տիկին Վարդուհի Պալեանի եւ աշակերտներու կողմէ: Այս խօսքերուն մէջ գնահատական արտայայտութիւններ եղան նաեւ Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդին կողմէ պատրաստուած մայրենի լեզուի արդիական դասազրբերու եւ ուսուցման օժանդակող նիւթերու մասին:

Աշակերտները արտասանեցին եւ երգեցին Հայերէն, Անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով՝ ազգային եւ կրօնական ոգեշունչ խանդավառութեամբ: Ի տես այս բոլորին՝ Նորին Սրբազնութիւնը յղեցուած շեշտով մը ըսաւ. «Ձիս յիսրէն տարիներ ետ փոխադրեցիք, այն օրերուն երբ ես ալ ձեր տարիքը ունէի եւ հայ դպրոցի աշակերտ էի ու կը սորվէի իմ մայրենի լեզուս, հայոց պատմութիւնը եւ հայերէն երգը:» Սրբազան Հայրը գնահատեց վարժարանի տնօրէնութեան, տեսչութեան եւ ուսուցչական կազմին նուիրեալ աշխատանքները եւ քաջալերեց աշակերտները՝ շեշտելով որ այս երկրին մէջ այլ լեզուներու կարգին անպայմանօրէն պէտք է սորվին իրենց մայրենի լեզուն ու պատմութիւնը եւ գիտակցին իրենց ազգային ինքնութեան:

Ապա Առաջնորդ Սրբազան Հայրը այցելեց դասարանները եւ ծանօթացաւ ուսուցիչներուն եւ անոնց կատարած աշխատանքներուն:

Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան հրաժեշտ առաւ Հ.Բ.Ը.Մ. Ալեք Մանուկեան ամէնօրեայ վարժարանի պատասխանատուներէն, ուսուցիչներէն եւ աշակերտներէն, գնահատելով նուիրատուներուն եւ նուիրեալ աշխատաւորներուն զոհողութիւնը: Հայեցի կրթութեան այս բոցկլտուն վառարանը ջեմացուցած էր նաեւ Նորին Սրբազնութեան հոգին:

Առաջնորդ Սրբազան Հայրը իր շքախումբով այցելեց նաեւ վարժարանին կից Հ.Բ.Ը.Միութեան Ալեք Մանուկեան կեդրոնը, ուր դիմաւորուեցաւ վարիչ Տոքթ. Յարութիւն Էսէկիւլեանի եւ քարտուղարուհիին կողմէ:

Նոյն օրը երեկոյեան ժամը 8.00ին՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ շրջանային ժողով՝ մասնակցութեամբ ծխական Խորհուրդի անդամներուն, թեմական պատգամաւորներուն եւ եկեղեցւոյ կազմակերպութեանց ներկայացուցիչներուն: Շրջանային այս ժողովին ներկայ էին նաեւ Օթթաուայի համայնքի ներկայացուցիչներէն եօթը անձեր:

Առաջնորդ Սրբազան Հօր Մոնթրէալ այցելութեան արձագանք հանդիսացաւ քաղաքի «Տհը Կագէթ» անգլիատառ օրաթերթը, ուր հրատարակուեցաւ Նորին Սրբազնութեան հետ տեղի ունեցած հարցազրոյց մը յօդուածի ձեւով:

Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան նիւ Եորք վերադարձաւ Հինգշաբթի Յունուար 17ի երեկոյեան:

ԴԻՈՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Յունուար 29, 1980
Նիւ Եորք, Ն.Ե.